

Հարսը թէ իւր տնից դուրս գալիս և թէ սկեսրանց տուն մտնելիս համարուում է օճախները \*\*):

### Գ. ԳԼՈՒԽ

## ՉՐԻ ՊԱՅՏԱՍՈՒՆՔ

Վարանդալում դեռ ևս մնացել է ջրի պաշտամունքը: Մեղք են համարում ջրի վրայ թքել և կամ նախատինքով վերաբերուել: Նորահարսը առաջին անգամ աղբիւրի մօտ գալով, զոհ է բերում նրան ցորեն: Կիրակի օրերը մոմեր են վառում սուրբ համարուած աղբիւրների առաջ: Առողջութիւն հայցող հիւանդը մոմեր է վառում, աքաղաղներ զոհում, երկրպագում և աղօթում աղբիւրին:

Աղբիւրներից միքանիսը ամենայն տեսակ, իսկ միւսները մի մի որոշ հիւանդութիւնների բուժիչ սրբատեղիներ են համարուում: Առաջիններից նշանաւոր են Ծօշու գիւղում, ձորակի մէջ գտնուողը, Վերին Սզնէքում «Կանաչ խաչ» անուն աղբիւրը, Հղորդի գիւղում «Մոշ-աղբիւրը», որ իւր անունը ստացել է մօտի մոշի թփերից և որի մօտ մի մեծ, պաշտուող կաղնի ծառ կայ: Չանախչի գիւղում՝ «Մեծ աղբիւրը», որի վրայ մի քանի անգամ լոյս է իջել: Ներքին Թաղավարդում երկու թքեռնի ծառերի տակ պաղպաղող «Կարմիր աղբիւրը», որի մօտով անցնողը պարտաւորուած մի բան է դնում աղբիւրի քարի վրայ և այնտեղից մի ուրիշ բան վերցնում:

Որպէս մի որոշ հիւանդութեան բուժիչ, նշանաւոր է Գիւնէյ-ձարտարի «Իաւաչիչակ» աղբիւրը: Ղալին-Խութի հըսկայական ժայռերի գազաթից կաթիլ կաթիլ ջուր է հոսում և հաւաքուում ժայռի մէջ փորուած մի նեղ և երկար փոսի մէջ: Մոլոքսը հիւանդութիւն ունեցողները գալիս այս ջրի

\*\*) Տես Երես 137, 139 և 140.

առջև մի զոյգ մոմ են վառում, երկու հակիթ և երկու բևեռ (քոռամեխ) թաղում ջրի մօտ, աղօթում և այդ ջրով լողանում են: Եթէ հիւանդը անձամբ չի կարող բարձրանալ այդտեղ, որովհետև սաստիկ զառիվար է, գալիս են նրա համար ջուր տանելու: Սրանք էլ նոյն կերպ վառում են մօմեր, թաղում հակիթ և քոռամեխ, աղօթում և բացի դրանցից, վերագառնալիս էլ բուրրովին լետ չեն նալում, և ջրի ամանը երբէք գետին չեն դնում:

Որպէս բոլ հիւանդութեան բուժիչ՝ նշանաւոր է Հիւնոտ գիւղի ջրվէժը, որի տակ նստում լողանում են, նախապէս մի զոյգ մոմ վառելով ու աղօթելով:

Միևս գրեթէ բոլոր սուրբ համարուած աղբիւրները բժշկում են ջերմ ու տենդ հիւանդութիւնը: Այսպիսիներից նշանաւոր են. Հղորդի գիւղում «Զրաւոր» (զօրաւոր) աղբիւրը, Փիրիճամալ գիւղում «Ծարաւաջուր» աղբիւրը, Ծօշկայ վանքի մօտ՝ կաթնանման աղբիւրը, Չանախչի գիւղում «Հոռնաղբիւրը» և «Բօսին» աղբիւրը, Խաչմաչ գիւղում «Թոխուպա» աղբիւրը: Այս վերջինս բղխում է մի աւերակ մատրան մէջ: Աւանդութիւնն ասում է, թէ մի կին իւր երեխայի հետ եկած է եղել այս մատուռը աղօթելու: Մօր աղօթքի ժամանակ երեխան շատ լաց է եղել և ջուր խնդրել: Մայրը աղօթքը չընդհատելու համար խնդրել է Աստուծուց, որ երեխայի ծարաւը յագեցնէ: Աստուած լսել է նրա խնդիրը և այդ աղբիւրը բղխել է մատրան մէջ:

Առհասարակ գրեթէ բոլոր սուրբ համարուած աղբիւրների մօտ կան ծառեր, որոնք նուիրական են համարում: Հիւանդները լողանալուց լետոյ իրենց վերալից մի կտոր են պատառում և փաթաթում ծառին, յուսալով իրենց հիւանդութիւնը այդ շորի հետ միասին թողնել այդ ծառի մօտ: Միքանիսի մօտ էլ, ինչպէս Փիրիճամալինը, ծառ չկայ: Այսպիսի գէպքում հանգերձի մի կտոր կապում են մի փոքրիկ քորի վերայ և դնում աղբիւրի գլխին:

Իսկ վերջին Թաղավարդի «Նիշմայ» (ընտիր) աղբիւրի մօ-

տով անցնողը և կամ ջուր խմողը անպայման մի քար է ձը-  
գում աղբիւրի գլխին, հաւատացած լինելով, որ եթէ այդ  
չանէ՝ ինքը կամ ազգականներից մինը կը մեռնի:

## Ե. ԳԼՈՒԽ

### ԾԱՌԵՐԻ ՊԱԾՏԱՄՈՒՆՔ

Վարանդայում սաստիկ տարածուած է ծառերի մեծա-  
րանքը. համարեա՛ ըլոր գիւղերում կան մի կամ միքանի  
ծառեր, որ սուրբ են համարւում, որոնց առաջ մոմեր են  
վառում, աքաղաղ և կամ ոչխար մատաղում, նրանց տերե-  
ւներից գուշակութիւններ անում: Շատ մեծ մեղք է համար-  
ւում այդ սրբազան ծառերը և կամ նրանց ճիւղերը կտրտե-  
լը, մեղանչողը անմիջապէս պատժւում է: Այսպէս՝ պատ-  
մում են, թէ մի մարդ, սրանից 40 տարի առաջ կտրել է  
Սարիբէկի ծառից մի ճիւղ, որի պատճառով և՛ անմիջապէս  
հիւանդացել, մահիճ է ընկել: Նրա հիւանդութիւնը մինչև  
այժմս էլ տևում է. նա այժմ պառկած է մի ջախպի մէջ:  
Կինը միշտ հսկում է նրա վերայ և ջախպի կողքից կապած  
մի գդալով շուտ շուտ կերակուր ածում նրա բերանը: Այժմ  
ամէն տարի մի անգամ նրան ուխտ են տանում Սարիբէկ:

Այս ծառերի ճիւղերը ծածկուած են բազմաթիւ, գոյնը գ-  
գոյն շորերի կտորներով, որ ուխտաւորները կապում են, ի-  
րենց հիւանդութիւնն էլ դրանց հետ միասին այդտեղ թող-  
նելու լուսով:

Երբ ուզում են գուշակութիւններ անել, առաւելապէս  
աղջիկները ճլորթի (ճինճի) են ձգում այդ սրբազան ծառե-  
րի վրայ, ինչպէս, օրինակ, շատ լաճախ անում են Նոր-Շէն  
գիւղում Սաղունց կաղնու վրայ, և սկսում ճօճալ: Մի որոշ  
բան մտները գնելով, նրանք լարում են իրենց բոլոր ուժը  
և ճլորթիով բարձրանալով՝ աշխատում մի տերև կտրել և